

ոտնլուռայի կոնքը, սպունգը, փշեայ պսակը և վարչամակը որ-
ցոյց կը տրուէին ուխտաւորներուն: Ս. Հեղինէին գիւտը յաւեր-
ժացնելու համար երեք խաչեր հաստատած էին Մատուռին ճա-
կատին դիմաց, անդաստակին դռնաքիւին (auvent) տակ: Է. դա-
րուն այս խաչերէն միոյն վրայ հաստատուեցաւ Ս. Գեղարզը:

Ժ. Դարուն, արարական յաճախակի արչաւանքներուն հե-
տեանքով, Մատուռին արեւելեան անդաստակը ծանր փոփոխու-
թիւններու ենթարկուեցաւ: 935ին կոստանդիանոսեան պաղիլի-
քայի դահլիճին կէսը մզկիթի փոխարկուած էր, այն պատրուա-
կով որ 638ին Երուսաղէմը գրաւուած ժամանակ, Օմար Սալի-
ֆան աղօթած էր «այն սանդուխին վրայ որ կը գտնուէր Ս. կոս-
տանդիանոսի եկեղեցիին դրան մօտ, արեւելեան կողմէն»: Ան-
դաստակին մնացեալ կէսը որ իսլամներէն ազատ ձգուած էր,
966ին եղաւ տխուր և ահաբեկիչ տեսարանի մը թատրը՝ որ գու-
շակել կու տար 1009ին պատահելիք մեծ աղէտքը: Եկեղեցիին
թշնամիները հաւաքուեցան Ս. կոստանդիանոսի դռներուն առ-
ջև և հրդեհեցին դանոնք և պաղիլիքայի տանիքը և Բոլորաշէնի
գմբէթը այրեցան: Յովհաննէս պատրիարքը, որ Ս. Յարութեան
տաճարին իւզի նկուզին մէջ ապաստանած էր, բռնեցեն և այրե-
ցին Ս. կոստանդիանոսի գաւիթին մէջ: Այս յարագէպերը Մա-
տուռի շէնքի մասին ա՛յնքան շահագրգռութիւն կ'ընծայեն որ-
քան պատմական տեղեկութիւնները: Անոնք թոյլ կու տան մեզ
հաստատել թէ մեծ եկեղեցիին մէջ ոչինչ փոխուած է, ինչպէս
Մատուռին անդաստակը, արեւելեան մեծ դռները, փողոցը ա-
ռաջնորդող սանդուխները, և առաջին շինութեան բոլոր տար-
րերը վերստին կ'երևին հոն:

Թ. դարու երկրաշարժը, Ժ. դարու հրդեհներն և աւարա-
նութիւնները Մոտեստոսի կողմէն վերանորոգուած կոստանդիա-
նոսեան հնագոյն վերաշինութեանց ո եւ է դժբախտութիւն մը
չէին խնայած: Ցաւալին այն է որ դարուն տիրող հալածանք-
ներուն պատճառով փլասուած շէնքերուն կատարեալ նորոգու-
թեան համար դրամ կը պակասէր: 966ի յարձակումներու ընթաց-
քին քանդուած տեղերու վերաշինութեան համար Երուսաղէմի
եկեղեցիին երկար սպասեց: Ս. Յարութեան տաճարը եթէ տասը
տարի վերջը կարողացաւ իր նոր գմբէթը կառուցանել, Մատու-
ռին կամ Ս. կոստանդիանոսի եկեղեցին քսան տարիէն աւելի